Հաստատված է
գիտ.խորհրդի 2021թ.
մարտի 30-ի թիվ 4 նիստում

Հաստատում եմ
ՀՊՄՀ ռեկտոր՝ _____Ռ. Միրզախանյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

031301.05.7

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

Կրթական ծրագրի մասնագիրը (ԿԾ), նախատեսված է դիմորդների, ուսանողների, ակադեմիական անձնակազմի, շահեկիրների և գործատուների համար: Այն տրամադրում է ծրագրի հիմնական հատկանիշների համառոտ ամփոփումը՝ իր մեջ ներառելով ուսումնառության նախատեսվող արդյունքները, մանրամասն տեղեկություններ ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների, ուսումնառության արդյունքների և յուրաքանչյուր մոդուլի բովանդակության մասին, որն ակնկալում է ողջամիտ ուսանողը և որին կարող է հասնել, եթե նա լիարժեքորեն օգտվում է իրեն առաջարկվող և տրամադրվող ուսումնական հնարավորություններից:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	***Կառավարման հոգեբանություն*** 031301.05.7
2. Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ	***Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ***
3. Շնորհվող որակավորումը	***Հոգեբանության մագիստրոս***
4. Կրեդիտների քանակը	***120 (հարյուր քսան)***
5.Բարձրագույն ուսումնական հաստատություն	***ՀՊՄՀ***
6. Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ	***Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ***
7. Կրթական ծրագրի հիմնական սպասարկող ամբիոն(ներ)	***Հոգեբանության ամբիոն Կիրառական հոգեբանության ամբիոն***
8. Կրթական ծրագրի ուսուցման լեզու	***Հայերեն***
9. Կրթական ծրագրի ուսուցման ձևը	***Առկա***
10. Կրթական ծրագիրը հավատար մագրված/լիցենզավորված է՝	

11. Կրթական ծրագրի ընդունելության չափանիշները (մուտքի պայմաններ):
Կառավարման հոգեբանության մագիստրոսի աստիճանի դիմորդը պետք է ունենա առնվազն բակալավրի աստիճան (դիպլոմ): Դիմորդը պետք է մասնակցի հարցազրույցի/քննության և բավարարի կառավարման հոգեբանություն մասնագիտության համար ՀՊՄՀ ընդունվելու շեմային նվազագույն պահանջներին:

12. Կրթական ծրագրի կառուցվածքը և նկարագիրը
Մագիստրոսի ծրագիրը բաղկացած է 3 հիմնական կրթամասերից՝ *Ընդհանուր գիտակրթական և հոգեբանամանկավարժական կրթամաս (27 կրեդիտ աշխատածավալով), Ընդհանուր* և հատուկ *մասնագիտական կրթամաս (46 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև Հետազոտական կրթամաս (47 կրեդիտ աշխատածավալով):* *1. Ընդհանուր գիտակրթական և հոգեբանամանկավարժական կրթամաս (27 կրեդիտ)*

Պարտադիր դասընթացներ (25 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ /7 մոդուլ/, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական, հոգեբանամանկավարժական և կրթության կառավարման գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ/ 3 մոդուլ/:

2. Ընդհանուր և հատուկ *մասնագիտական կրթամաս (46 կրեդիտ)*

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

Պարտադիր դասընթացներ (26 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր գիտատեսական և գիտամեթոդական դասընթացներ / 10 մոդուլ/,:

Կամ ընտրական դասընթացներ (20 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մասնագիտական դասընթացներ/ 9 մոդուլ/:

3. Հետազոտական կրթամաս (47 կրեդիտ)

Հետազոտական աշխատանք կիսամյակում (16 կրեդիտ)

Մասնագիտական պրակտիկա (6 կրեդիտ)

Հետազոտական պրակտիկա (8 կրեդիտ)

Մագիստրոսական ատենախոսության պատրաստում (13 կրեդիտ)

Մագիստրոսական ատենախոսության պաշտպանության պաշտպանություն (4 կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգումը՝ ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

13. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և բազմաբովանդակ մեթոդների համադրման հենքի վրա կառավարման հոգեբանության ոլորտի որակյալ, մրցունակ, ստեղծագործահեն և հետազոտական հմտություններով զինված մասնագետների համալիր և բարձրորակ պատրաստումը:

14. Ծրագրի կրթական ելքային արդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն
Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. *Ա1 բացատրելու կառավարման հոգեբանության տեսական և մեթոդաբանական հիմքերը, կազմակերպության մեջ մարդկանց վարքի և հոգեկան գործունեության ձևերն ու օրինաչափությունները, սեփական հոգեբանական ռեսուրսները, գիտակցության, ինքնագիտացության, վարքի և գործունեության զարգացման տեխնոլոգիաները և տեխնիկաները,* *Ա2 ուրվագծելու և սահմանելու հետազոտության հիմնախնդիրներ, նպատակներ և խնդիրներ ժամանակակից հոգեբանական գիտության և պրակտիկայի ձեռքբերումների հիման վրա, հիմնավորելու վարկածներ, ընտրելու հետազոտության /տեսական և էմպիրիկ/ ապահովման ծրագրեր,* *Ա3 ներկայացնելու գիտական հետազոտությունների արդյունքները և ապահովելու կառավարման ոլորտում դրանց ներդրման հոգեբանական ուղեկցումը:*
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ
Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. *Բ1. հաշվի առնելու մարդկանց անհատական հոգեբանական և անձնային առանձնահատկությունները մասնագիտական կառավարչական գործունեության գործընթացքում, վերլուծելու անձի մոտիվացիոն, հուզակամային կարգավորման ոլորտները, հաղորդակցման և գործունեության օրինաչափությունները,* *Բ2. ներազդելու մարդկանց վարքի վրա, կարգավորելու նրանց հոգեկան վիճակները տարբեր, այդ թվում նաև բարդ միջանձնային հարաբերությունների իրավիճակների համատեքստում, վերլուծելու կառավարչական գործունեությունը և համապատասխան հմտությունները,* *Բ3. վերլուծելու, համադրելու և մեկնաբանելու հետազոտության արդյունքները, բազմաբնույթ գործոնների ազդեցությունները, ընտրելու կամ մշակելու հետազոտություններին համարժեք գործիքակազմ և կառավարման ոլորտում դրանց ներդրման հոգեբանական արդյունավետ մեխանիզմներ:*
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ
Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. *Գ1. համադրելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, այդ թվում՝ օտար լեզվով, հավաքագրված գիտելիքները (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)՝ ինքնուրույնաբար կիրառելով նաև համակարգչային մասնագիտական ծրագրեր,* *Գ2. արդյունավետորեն համագործակցելու մասնագիտական խմբերում և անհրաժեշտության դեպքում կիրառելու մարդկային ռեսուրսների գնահատման ու կառավարման արդյունավետ միջոցներ:*

15. Գնահատման մեթոդներ
«Կառավարման հոգեբանություն» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով: Գնահատվում են ուսանողի՝ ա. գիտելիքը, բ. ունակություններն ու կարողությունները, գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը: *Դասընթացների գնահատման մեթոդներից են.* *1. տեսական դասընթացների պարագայում՝* *գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ),* *2. գործնական դասընթացների պարագայում՝* *գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, բանավոր հարցումներ և հարցազրույցներ, էսսեներ և բանավոր և գրավոր պրեզենտացիաներ:* *Հետազոտական աշխատանքների (հաշվետվություն, մագիստրոսական ատենախոսություն) գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:* *Գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:* *Գնահատման մանրամասները տես՝ ՀՊՄՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգում՝* *https://aspu.am/website/images/files/us_%20giteliqneri%20stugman%20ev%20gnahatman%20hamakarg.pdf:*

16. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ
Ուսուցումն իրականացվում է խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան՝ ձևավորված փոքրաթիվ խմբերով: Դասավանդման մեթոդները խրախուսում են ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական

ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:
Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական /անհատական/ պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:
<u>Դասախոսություններ</u> – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն,
<u>Սեմինարներ</u> – խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում,
<u>Գործնական պարապմունքներ</u> – փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն,
<u>Աջակցվող ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ</u> – Անհատական հետազոտության և զարգացման աջակցում,
<u>Անհատական խորհրդատվություն</u> – Ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

17. Ուսումնական պլան

Տես կցված հավելված 3

18. Մասնագիտական գործունեության ոլորտներ

«Կառավարման հոգեբանության» մագիստրոսի ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու որպես՝

1. հոգեբան. հոգեբան-խորհրդատու հանրակրթական ուսումնական հաստատություններում, հոգեբանական, զարգացման և աջակցման կենտրոններում,
2. հոգեբան. հոգեբան-խորհրդատու ըստ պահանջի տարբեր կառույցներում,
3. միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում որպես կառավարման հոգեբանության դասախոս,
4. անձնակազմի ընտրության և ադապտացիայի ստորաբաժանումների ղեկավարներ և մասնագետներ (կադրային ծառայություններում, մարդկային ռեսուրսների զարգացման բաժիններում),
5. անձնակազմի գնահատման և կորպորատիվ ուսուցման, վերապատրաստման բաժինների ղեկավարներ և մասնագետներ, այդ թվում նաև կրթական հաստատություններում,
6. հաճախորդների սպասարկման բաժինների ղեկավարներ և մասնագետներ,
7. ձեռնարկությունների և կազմակերպությունների հոգեբանական ծառայությունների ղեկավարներ և մասնագետներ,

8. կառավարման բաժինների մասնագետներ,
9. հավաքագրման գործակալությունների ղեկավարներ,
10. գիտահետազոտական հաստատություններում՝ գիտաշխատող /հոգեբան/,
11. միջազգային գիտակրթական ծրագրերում՝ հետազոտող, համակարգող:

19. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

1. *ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը:*
2. *Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները:*
3. *Հարատև /ցկյանս/ ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը:*
4. *Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները):*
5. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակի նկարագիրչները:*
6. *ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները:*
7. *Արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրերը:*

20. <<Կառավարման հոգեբանություն>> ՄԿԾ-ի շրջանակներում դասախոսական կազմի որակավորմանը և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները

Դասավանդողները պետք է՝
Ա/ ունենան որակավորում, որը համապատասխանում է ՄԿԾ ելքային արդյունքներին,
Բ/ տիրապետեն կրթական ծրագրի մաս կազմող այլ դասընթացներին,
Գ/ ունենան մանկավարժական որակներ:

21. Հետագա ուսման հնարավորությունները

Ազգային որակավորումների շրջանակով սահմանված 8-րդ (հետազոտողի) մակարդակ:

22. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Ծրագրի շրջանակում սվորողը ձեռք է բերում բավարար ընդհանրական, գործիքային և մասնագիտական կոմպետենցիաներ՝ շարունակելու կրթությունը ասպիրանտուրայում:

Հավելված 1

<<ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ>> ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ			
N	**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ և ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Ա1	*բացատրելու կառավարման հոգեբանության տեսական և մեթոդաբանական հիմքերը, կազմակերպության մեջ մարդկանց վարքի և հոգեկան գործունեության ձևերն ու օրինաչափությունները, սեփական հոգեբանական ռեսուրսները, գիտակցության, ինքնագիտացության, վարքի և գործունեության զարգացման տեխնոլոգիաները և տեխնիկաները*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *ավանդական դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք* • *անհատական և խմբային աշխատանքներ* • *մասնագիտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ*	• *գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ,* • *միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն,* • *հաշվետվություններ,* • *էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ներկայացումներ (պրեզենտացիաներ),* • *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի արդյունքների մասին զեկուցումներ:* • *գնահատվող առաջադրանք Classroom Էլեկտրոնային հարթակում*
Ա2	*ուրվագծելու և սահմանելու հետազոտության հիմնախնդիրներ, նպատակներ և խնդիրներ ժամանակակից հոգեբանական գիտության և պրակտիկայի ձեռքբերումների հիման վրա, հիմնավորելու վարկածներ, ընտրելու հետազոտության /տեսական և էմպիրիկ/ ապահովման ծրագրեր*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *ավանդական դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք* • *անհատական և խմբային աշխատանքներ* • *մասնագիտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ*	• *գրավոր ստուգողական աշխատանքներ,* • *միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն,* • *հաշվետվություններ,* • *էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ներկայացումներ (պրեզենտացիաներ),* • *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի*

			արդյունքների մասին զեկուցումներ: • *հետազոտական աշխատանք կիսամյակում*
Ա3	*ներկայացնելու գիտական հետազոտությունների արդյունքները և ապահովելու կառավարման ոլորտում դրանց ներդրման հոգեբանական ուղեկցումը*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *ավանդական դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք* • *անհատական և խմբային աշխատանքներ* • *մասնագիտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ*	• *միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն,* • *հաշվետվություն,* • *էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ներկայացումներ (պրեզենտացիաներ),* • *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի արդյունքների մասին զեկուցումներ* • *մագիստրոսական թեզի պաշտպանություն*
N	**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Բ1	*հաշվի առնելու մարդկանց անհատական հոգեբանական և անձնային առանձնահատկությունները մասնագիտական կառավարչական գործունեության գործընթացքում, վերլուծելու անձի մոտիվացիոն, հուզակամային կարգավորման ոլորտները, հաղորդակցման և գործունեության օրինաչափությունները*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք* • *անհատական և խմբային աշխատանքներ* • *մասնագիտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ* • *մոդելավորում*	• *գրավոր ստուգողական աշխատանքներ,* • *միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, հաշվետվություններ,* • *էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ներկայացումներ (պրեզենտացիաներ),* • *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի արդյունքների մասին զեկուցումներ:* • *մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն*
Բ2	*Բներազդելու մարդկանց վարքի վրա, կարգավորելու նրանց հոգեկան վիճակները տարբեր, այդ թվում նաև բարդ միջանձնային հարաբերությունների*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք*	• *միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն,* • *հաշվետվություններ,*

	իրավիճակների համատեքստում, վերլուծելու կառավարչական գործունեությունը և համապատասխան հմտությունները	• *անհատական և խմբային աշխատանքներ* • *մասնագիտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ* • *մոդելավորում*	• *Էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ներկայացումներ (պրեզենտացիաներ),* • *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի արդյունքների մասին զեկուցումներ:* • *մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն* • *թղթապանակ*
Բ3	*վերլուծելու, համադրելու և մեկնաբանելու հետազոտության արդյունքները, բազմաբնույթ գործոնների ազդեցությունները, ընտրելու կամ մշակելու հետազոտություններին համարժեք գործիքակազմ և կառավարման ոլորտում դրանց ներդրման հոգեբանական արդյունավետ մեխանիզմներ*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք* • *անհատական և խմբային աշխատանքներ* • *մասնագիտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ* • *մոդելավորում*	• *Էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ներկայացումներ (պրեզենտացիաներ),* • *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի արդյունքների մասին զեկուցումներ:* • *հետազոտական պրակտիկայի հաշվետվություն* • *մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն*
N	**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (ՓՈԽԱՆՑԵԼԻ) ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Գ1	*համադրելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, այդ թվում՝ օտար լեզվով, հավաքագրված գիտելիքները (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)՝ ինքնուրույնաբար կիրառելով նաև համակարգչային մասնագիտական ծրագրեր*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք* • *անհատական և խմբային աշխատանքներ* • *մասնագիտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ*	• *գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ,* • *միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, հաշվետվություններ,* • *Էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ներկայացումներ (պրեզենտացիաներ),*

			• *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի արդյունքների մասին զեկուցումներ:* • *մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն*
Գ2	*Գ2. արդյունավետորեն համագործակցելու մասնագիտական խմբերում և անհրաժեշտության դեպքում կիրառելու մարդկային ռեսուրսների գնահատման ու կառավարման արդյունավետ միջոցներ*	• *ինտերակտիվ դասախոսություն* • *սեմինար* • *գործնական պարապմունք* • *անհատական և խմբային աշխատանքներ* • *մանկավարժահետազոտական պրակտիկա* • *կլոր սեղան* • *բանավեճ*	• *խմբային աշխատանքի պրեզենտացիա* • *միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, հաշվետվություններ,* • *Էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր* • *ընթացիկ առաջադրանքների ստուգում* • *հետազոտական աշխատանքի արդյունքների մասին զեկուցումներ:* • *մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն*

Հավելված 2

<<ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ		Կրթական ելքային արդյունքներ							
Դասընթացի անվանում		Գիտելիք և իմացություն			Գործնական մասնագիտական			Ընդհանրացված փոխանցելի	
		1	2	3	1	2	3	1	2
1.	*Օտար լեզու՝ մասնագիտական հաղորդակցում*	+			+			+	+
2.	*ՏՀՏ-ն մասնագիտական ոլորտում*			+		+		+	
3.	*Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանություն*		+	+	+	+	+	+	+
4.	*HR կառավարման հոգեբանություն*	+			+	+	+		+
5.	*Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանություն*		+	+	+	+	+	+	+
6.	*Անձի հոգեբանական պրոբլեմները*	+	+		+				+
7.	*Տրամաբանություն*		+			+		+	+
8.	*Դասընթաց 1 /հոգեբանություն/*	+	+		+			+	+
9.	*Դասընթաց 2 /գիտական աշխատանքի տեխնոլոգիա/*		+	+		+	+	+	+
10.	*Դասընթաց 3 /կրթության կառավարում/*		+			+		+	+
11.	*Քանակական մեթոդները հոգեբանության մեջ*		+	+		+	+	+	
12.	*Սոցիալական հոգեբանության*		+	+		+	+		+

	ժամանակակից տեխնոլոգիաներ								
13.	*Հոգեբանական ուղեկցման և գնահատման տեխնոլոգիաներ*	+		+	+		+	+	+
14.	*Սոցիալական հոգեբանության ժամանակակից ուսումնասիրություններ*	+	+		+				+
15.	*Կիրառական հոգեբանության ժամանակակից տեխնոլոգիաները*	+		+	+	+	+		+
16.	*Հոգեթերապիայի պրակտիկում*	+		+	+	+	+		+
17.	*Հոգեբանական խորհրդատվության տեսութ. և տեխնոլոգ.*	+		+	+	+	+		+
18.	*Անձի անհատական զարգացում*	+			+	+		+	
19.	*Ախտահոգեբանական ախտորոշում*	+		+	+		+	+	
20.	*Հոգեբանական թրեյնինգների տեսություն և պրակտիկա*			+	+	+	+		+
21.	*Դասընթաց 1* (մ) /1.1/*	+	+		+	+			+
	Դասընթաց 2 (մ) /1.1/*								
22.	*Դասընթաց 3 */1.1/*	+		+	+	+			+
	*Դասընթաց 4 */1.1/*								
23.	*Դասընթաց 1 /1.2/*		+	+	+	+			+
	Դասընթաց 2 /1.2/								
24	*Դասընթաց 3 /1.2/*	+		+		+			+
	Դասընթաց 4 /1.2/								
25.	*Դասընթաց 1 /2.1/*		+	+		+	+		+
	Դասընթաց 2 /2.1/								
26.	*Դասընթաց 3 /2.1/*	+			+	+			+

	Դասընթաց 4 /2.1/								
27	*Դասընթաց 5 /2.1/*	+	+		+	+	+	+	+
	Դասընթաց 6 /1.1/								
28.	*Դասընթաց 1 /2.2/*	+			+	+			+
	Դասընթաց 2 /2.2/								
29.	*Դասընթաց 3 /2.2/*	+			+	+			+
	Դասընթաց 4 /2.2/								
30.	*Հետազոտական աշխատանք կիսամյակում*		+	+	+	+	+	+	+
31.	*Մասնագիտական պրակտիկա*	+	+	+	+	+	+	+	+
32.	*Հետազոտական պրակտիկա*	+	+	+	+	+	+	+	+
33.	*Մասնագիտական ատենախոսության պատրաստում*	+	+	+	+	+	+	+	+
34.	*Մասնագիտական ատենախոսության պաշտպանություն*		+	+		+	+		+

Հավելված 3

<<Հոգեբանություն>> մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանը
ՄԿԾ առկա *https://docs.google.com/spreadsheets/d/1m30G1GpDBJcWncF9Dle1ZuLepw9kg3On/edit#gid=957203486*

Հաստատված է Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի 17.12.2020 թվականի թիվ 5 նիստում

Ֆակուլտետի խորհրդի նախագահ **Ռուզաննա Պետրոսյան**